ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/42

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ

Բողոքաբեր՝ «Կարեն Սարգսյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով գնանշման հարցում, դեղորայքի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից 19.03.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝ չեղյալ համարել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 12-ի թիվ 3 արձանագրությամբ կայացված 1-ին և 2-րդ չափաբաժիններով՝ «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ին և «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 19.03.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/40 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

26.03.2020թ.-ին, 14.04.2020թ.-ին և 20.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 14.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.04.2020թ.-ին:

2. «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն 19.03.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«2020 թվականի մարտի 3-ին «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից, /որը գտնվում է Ֆանարջյան 76շ. հասցեում/ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի կիրառմամբ՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսելու հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի բոլոր 5 չափաբաժիններին /1. Վերմակ սինտիպոնե, 2. Անկողնային սպիտակեղեն, 3. Բարձ, 4. Ներքնակներ և 5. Ներքնակի երես/ մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել 4 կազմակերպություններ՝ «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն, «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն, «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ն և «Հոթել տեքստիլ» ՍՊԸ-ն, կցելով գնային առաջարկներ ստորև բերված գներով.

Հ.Հ	Մասնակցի անվանում	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գին
1.	«Կարեն Սարգսյան» Ա/Ձ	2002000	273000	455000	2730000
	«Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ	2835000	315000		3150000
	«ԷՍ ԸՆԴ ԷԼ	2885400	320600		3206000

	ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ				
	«Հոթել փեքսփիլ» ՍՊԸ	392000	980000		490000
2.	«Կարեն Սարգսյան» Ա/Ձ	2772000	378000	630000	3780000
	«Ժասմին հոմ փեքսփիլ» ՍՊԸ	3213000	357000		3570000
	«ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ	3931200	436800		4368000
	«Հոթել փեքսփիլ» ՍՊԸ	7560000	1890000		9450000
3.	«Կարեն Սարգսյան» Ա/Ձ	693000	94500	157500	945000
	«Ժասմին հոմ փեքսփիլ» ՍՊԸ	810000	90000		900000
	«ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ	591300	65700		657000
	«Հոթել փեքսփիլ» ՍՊԸ	1260000	315000		1575000
4.	«Կարեն Սարգսյան» Ա/Ձ	1356300	184950	308250	1849500
	«Ժասմին հոմ փեքսփիլ» ՍՊԸ	2983860	331540		3315400
	«ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ	3403080	378120		3781200
	«Հոթել փեքսփիլ» ՍՊԸ	7672000	1918000		9590000
5.	«Կարեն Սարգսյան» Ա/Ձ	2464000	336000	560000	3360000
	«Ժասմին հոմ փեքսփիլ» ՍՊԸ	1585080	176120		1761200
	«ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ	1134000	126000		1260000
	«Հոթել փեքսփիլ» ՍՊԸ	1792000	448000		2240000

Նշված ընթացակարգի 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժիններով ներկայացրել եմ ամենացածր գինը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 10-ի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության /կցվում է/ համաձայն հրավիրվել եմ գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Բանակցությունների ժամանակ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գները նվազեցնելու առաջարկություններ են ներկայացրել «Ժասմին հոմ փեքսփիլ» և «Էս Ընդ Էլ

Տեքստիլ» ՍՊԸ-ները, 1-ին չափաբաժնով «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն առաջարկել է 2,270,000 դրամ, «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ն 2,100,000 դրամ, իսկ 2-րդ չափաբաժնով «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն առաջարկել է 3,120,000 դրամ, ընդ որում վերջիններիս առաջարկվող գների նվազեցրել են ոչ միայն շահույթի հաշվին այլ առաջարկել են մրցույթի ընթացակարգին ներկայացված ինքնարժեքից էականորեն ցածր գներ և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 12-ի թիվ 3 արձանագրությամբ /կցվում է/ հաղթող են ճանաչվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանվում է, որ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

Գնումների մասին ՀՀ օրենսդրությունից բխում է, որ գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունները կարող են վարվել բացառապես ակնկալվող շահույթի շրջանակներում, իսկ հաշվարկված ինքնարժեքը ենթակա չէ նվազեցման, քանի որ այն հաշվարկվում է համապատասխան տեխնիկական բնութագրերի պահանջներից ելնելով և այդ պահանջներին բավարարող ծառայությունների մատուցումն ապահովելու համար: Միանշանակ է, որ ինքնարժեքը փոփոխական լինել չի կարող և պետք է հիմնվի հստակ հաշվարկների վրա: Իսկ եթե մասնակիցը գնային առաջարկը կազմելիս սխալվել է, ներկայացնելով սխալ ինքնարժեք, ապա հայտը ենթակա է մերժման:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է չեղյալ համարել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 12-ի թիվ 3 արձանագրությամբ կայացված 1-ին և 2-րդ չափաբաժիններով՝ «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ին և «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու որոշումը:

3. <u>«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 19.03.2020թ.-ին գրությամբ դիմել է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով

«Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից 19.03.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/42 ծածկագրով բողոքը (այսուհետև նաև՝ Գործ):

Գործի շրջանակներում <<Կարեն Սարգսյան>> Ա/Ձ-ն (այսուհետև նաև՝ Բողոքաբեր) խնդրել է, որպեսզի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը չեղյալ համարի ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/37 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 12-ի թիվ 3 արձանագրությամբ 1-ին և 2-րդ չափաբաժիններով <<Ժամին հոմ տեքստիլ>> և <<ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ-ներին հաղթող ճանաչելու որոշումը:

Ուսումնասիրելով Բողոքաբերի կողմից ներկայացված բողոքը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրա դեմ:

1. Գրավոր Դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1.1. ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետև նաև՝ Պատվիրատու) 03/03/2020 թվականին www.armeps.am էլեկտրոնային համակարգով հայտարարել է ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/37 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նախատեսվում է ձեռք բերել՝ 1-ին չափաբաժին <<Վերմակ սինտիպոնե>> և 2-րդ չափաբաժին <<Անկողնային սպիտակեղեն>> (այսուհետև միասին նաև՝ Գնման առարկաներ):

1.2. Ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2020 թվականի մարտի 10-ին, ժամը 11:00-ին: Գնման առարկաների համար գնային առաջարկներ են ներկայացրել <<Կարեն Սարգսյան>> Ա/Ձ-ն, <<Ժամին հոմ տեքստիլ>> ՍՊԸ-ն, <<ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ-ն և <<Հոթել տեքստիլ>> ՍՊԸ-ն, որոնք առաջարկել են Գնման առարկաների մասով պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

Մասնակցի անվանումը	Գնային առաջարկը 1-ին չափաբաժնի համար ՀՀ դրամ			
	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր
	1	2	3	4=1+2+3
<<Կարեն Սարգսյան>> Ա/Ձ	2002000 երկու միլիոն երկու հազար	273000 երկու հարյուր յոթանասուներեք հազար	455000 չորս հարյուր հիսունհինգ հազար	2730000 երկու միլիոն յոթ հարյուր երեսուն հազար

<<Ժամանակ հոմ տեքստիլ>> ՍՊԸ	*2835000 երկու միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար*	*315000 երեք հարյուր տասնհինգ հազար*		*3150000 երեք միլիոն հարյուր հիսուն հազար*
<<ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ	*2885400 երկու միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար չորս հարյուր*	*320600 երեք հարյուր քսան հազար վեց հարյուր*		*3206000 երեք միլիոն երկու հարյուր վեց հազար*
<<Հոթել տեքստիլ>> ՍՊԸ	*3920000 երեք միլիոն ինը հարյուր քսան հազար*	*980000 ինը հարյուր ութսուն հազաչ*		*4900000 չորս միլիոն ինը հարյուր հազար*
Մասնակցի անվանումը	*Գնային առաջարկը 2-րդ չափաբաժնի համար ՀՀ դրամ*			
	Ինքնարժեք	*Շահույթ*	*ԱԱՀ*	*Ընդհանուր*
	1	*2*	*3*	*4=1+2+3*
<<Կարեն Սարգսյան>> Ա/Ձ	*2772000 երկու միլիոն յոթ հարյուր յոթանասուներկու հազար*	*378000 երեք հարյուր յոթանասունութ հազար*	*630000 վեց հարյուր երեսուն հազար*	*3780000 երեք միլիոն յոթ հարյուր ութսուն հազար*
<<Ժամանակ հոմ տեքստիլ>> ՍՊԸ	*3213000 երեք միլիոն երկու հարյուր տասներեք հազար*	*357000 երեք հարյուր հիսունյոթ հազար*		*3570000 երեք միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար*
<<ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ	*3931200 երեք միլիոն ինը հարյուր երեսունմեկ հազար երկու հարյուր*	*436800 չորս հարյուր երեսունվեց հազար ութ հարյուր*		*4368000 չորս միլիոն երեք հարյուր վաթսունութ հազար*
<<Հոթել տեքստիլ>> ՍՊԸ	*7560000 յոթ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար*	*1890 000 մեկ միլիոն ութ հարյուր իննսուն հազար*		*9450000 ինը միլիոն չորս հարյուր հիսուն հազար*

1.3. Գնման ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ինչի համաձայն 2020 թվականի մարտի 12-ին կազմակերպվել են գների նվազեցման շուրջ բանակցություններ, որի ընթացքում գնի առաջարկություններ են ներկայացրել <<Ժամանակ հոմ տեքստիլ>> ՍՊԸ-ն և <<ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ-ն (այսուհետև միասին նաև՝ Մասնակիցներ):

Մասնակիցները առաջարկել են պայմանագիրը կատարել հետևյալ նվազեցված գներով.

Մասնակցի անվանումը	**Նվազեցրած գնային առաջարկը 1-ին չափաբաժնի համար ՀՀ դրամ**			
	Ինքնարժեք	**Շահույթ**	**ԱԱՀ**	**Ընդհանուր**
	1	**2**	**3**	**4=1+2+3**
<<Ժամանակ հոմ տեքստիլ>> ՍՊԸ	227000 երկու միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար	0 զրո		227000 երկու միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար
<<ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ	2100000 երկու միլիոն հարյուր հազար	0 զրո		2100000 երկու միլիոն հարյուր հազար
Մասնակցի անվանումը	**Նվազեցրած գնային առաջարկը 2-րդ չափաբաժնի համար ՀՀ դրամ**			

	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր
	1	2	3	4=1+2+3
<<Ժասմին հոմ տեքստիլ>> ՍՊԸ	3120000 երեք միլիոն հարյուր քսան հազար	0 զրո		3120000 երեք միլիոն հարյուր քսան հազար

1.4. 2020 թվականի մարտի 12-ին կազմվել է գնահատող հանձնաժողովի նիստի վերաբերյալ թիվ 3 արձանագրությունը, որտեղ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակիցներ են ճանաչվել համապատասխանաբար <<ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ-ն և <<Ժասմին հոմ տեքստիլ>> ՍՊԸ-ն, քանի որ վերջիններս բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից այդ չափաբաժինների համար ներկայացրել են նվազագույն գնային առաջարկներ:

1.5. 2020 թվականի մարտի 24-ին թիվ 01/10-46 և 01/10-47 գրություններով Պատվիրատուն դիմել է Մասնակիցներին և խնդրել է տալ բացատրություն, թէ ինչով է պայմանավորված Մասնակիցների կողմից բանակցությունների ընթացքում ինքնարժեք սյունյակում նշված գնի փոփոխությունը, հայտով ներկայացված ինքնարժեք սյունյակով սահմանված գնի նկատմամբ:

Թիվ 01/10-46 գրությանը ի պատասխան <<ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ-ն 24. 03. 2020թ. -ի գրությամբ հայտնել է, որ. <<(...) մեր ընկերությունը I փուլում հաշվարկել և ներկայացրել է ինքնարժեք+շահույթ+գին արժեքները հետևյալ հաշվարկից ելնելով.

I փուլի գին = հումքի ձեռքբերում+տրանսպորտ+ներգրավող աշխատուժ+այլ ռեսուրսներ նշվածն արտադրելու համար

II փուլի գին (բանակցությունների արդյունքում) = պատրաստի ապրանքի գնում շուկայից

Սա հանգեցրել է գնի նվազեցման նաև ինքնարժեք դաշտում:>>

Թիվ 01/10-47 գրությանն ի պատասխան՝ <<Ժասմին հոմ տեքստիլ>> ՍՊԸ-ն 24. 03. 2020թ. -ի գրությամբ հայտնել է, որ. <<«Ժասմին Հոմ Տեքստիլ» ՍՊԸ-ն բանակցությունների ընթացքում գնի փոփոխություն է կատարել՝ դիտարկելով այն, որ հայտով ներկայացված ինքնարժեքը հաշվարկված է եղել պատվերն իրականացնելու նպատակով հումքը ձեռք բերելու հայաստանյան շուկայից, բանակցությունների ընթացքում «Ժասմին Հոմ Տեքստիլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները դիտարկել են հումքը ներմուծելու տեսակետը, ինչի արդյունքում կստանանք ավելի ցածր ինքնարժեք:>>

2. Բողոքի պահանջի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2. 1. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն.

<<1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, (...)>>:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 3-րդ ենթակետի համաձայն.

<<4. 3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

3) իր կողմից հաստատված գնային առաջարկ>>:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.1 և 5. 2 կետերի համաձայն.

<<5.1 Առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում (...)>>:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.6 կետի 1-ին ենթակետի և 8. 7 կետի համաձայն.

<<8.6 Հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ (...) գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը (...).>>:

8.7 (...) եթե (...) գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայման¬ները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն.

<<1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների (...), ծեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:>>

Վերը նշված նորմերին համաձայն՝ մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացնում է հայտ, որն իր մեջ ներառում է նաև գնային

առաջարկ: Գնային առաջարկը բաղկացած է մի քանի բաղադրիչներից, այն է՝ ինքնարժեք, շահույթ, ԱԱՀ: Գնային առաջարկի ինքնարժեք սյունակում գնման ընթացակարգի մասնակիցը լրացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ինքնարժեքը, որը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի և այլ վճարումների գծով ծախսերը: Գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասանակիցների ներկայացրած հայտերը պատվիրատուն գնահատում է հրավերով սահմանված կարգով: Իսկ գնման ընթացակարգի առաջին տեղ, ինչպես նաև հաղթող մասնակից է ճանաչվում հրավերի ոչ գնային պայմաններին համապատասխան հայտ ներկայացրած այն մասնակիցը, որի գնային առաջարկը տվյալ գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներից ամենացածրն է: Ընդ որում՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա հրավերի ոչ գնային պայմաններին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների հետ Պատվիրատուն պետք է վարի բանակցություններ, հայտով ներկայացրած գնային առաջարկների նվազեցման շուրջ: Մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել՝ նվազեցնել հայտով ներկայացրած իր գնային առաջարկը: Քանի որ գնային առաջարկի բաղադրիչներից մեկը նաև ինքնարժեքն է, ապա նշվածից կարող ենք եզրակացնել, որ հայտով ներկայացրած գնային առաջարկում նշված ինքնարժեքը բանակցությունների ժամանակ նույնպես կարող է վերանայվել՝ նվազեցվել:

Հայտով ներկայացված գնային առաջարկում նշված ինքնարժեքի վերանայումը՝ նվազեցումը բանակցությունների ժամանակ կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով, մասնավորապես՝

1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկի ինքնարժեքի նվազեցումը <<ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ-ն պայմանավորել է նրանով, որ բանակցությունների փուլում առաջարկել է շուկայից ձեռքբերվելիք ապրանքի գինը, այն ինչ Ընթացակարգի հայտով ներկայացրած գնային առաջարկում <<ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ-ն նշել էր ապրանքը իր կողմից արտադրելու գինը, որը շատ ավելի թանկ է շուկայում վաճառվող պատրաստի արտադրանքի գնից:

Իսկ 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկների ինքնարժեքի նվազեցումը <<Ժասմին հոմ տեքստիլ>> ՍՊԸ-ն պայմանավորել է նրանով, որ Ընթացակարգի հայտով ներկայացրած գնային առաջարկում ինքնարժեքը հաշվարկված է

եղել այն հաշվով, որ ապրանքը արտադրելու համար նախատեսված հումքը պետք է ձեռք բերվեր հայաստանյան շուկայից, սակայն բանակցությունների ժամանակ, փորձելով գտնել ավելի մատչելի տարբերակ, <<Ժասմին հոմ տեքստիլ>> ՍՊԸ-ն առաջարկել է արտադրանք, որի հումքը նախատեսում է ներմուծել արտերկրից:

Այսպիսով, Մասնակիցների վերը նշված բացատրություններից պարզ է դառնում, որ բանակցությունների փուլում Գնման առարկաների համար առաջարկված գները ցածր չեն դրանց ինքնարժեքից, այլ Մասնակիցները բանակցությունների փուլում դիտարկել են այդ ապրանքները ձեռքբերելու և արտադրելու ուրիշ տարբերակներ, որոնց արդյունքում Մասնակիցների առաջարկված ապրանքների ինքնարժեքը էլ ավելից ցածր է, քան սկզբում՝ մինչև բանակցությունների փուլը իրենց կողմից դիտարկված և գնային առաջարկով ներկայացված ապրանքների գինը: Հետևաբար բանակցությունների փուլում Մասնակիցների վերանայված՝ նվազեցրած գնային առաջարկները համապատասխանում են Ընթացակարգի հրավերի պահանջներին, ուստի Ընթացակարգի շրջանակներում Մասնակիցների ներկայացրած հայտերը ենթակա չեն մերժման:

Նաև հարկ ենք համարում նշել, որ Ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկների նվազեցման շուրջ կազմակերպված բանակցությունների արդյունքում Մասնակիցների կողմից գնային առաջարկների նվազեցումը որևէ կերպ չի անդրադարձել Ընթացակարգի հրավերով սահմանված և Ընթացակարգի շրջանակներում Մասնակիցների ներկայացրած ապրանքների ամբողջական նկարագրի, այն է՝ տեխնիկական բնութագրերի վրա, որից հետևում է, որ Մասնակիցները պարտավոր են Պատվիրատուին մատակարարել Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերով սահմանված ապրանքները նվազեցրած գներով:

2.1. Վերը գրվածից զատ նաև հարկ ենք համարում նշել, որ գնման գործընթացը կազմակերպելիս Պատվիրատուն պարտավոր է ղեկավարվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի <<Օրենքի նպատակը, սկզբունքները և գործողության ոլորտը>> վերտառությամբ 3-րդ հոդվածի դրույթներով: Այդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն .

<<1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների (...), ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:>>

Վերը գրված իրավական նորմերից հետևում է, որ գնման գործընթացի շրջանակներում Պատվիրատուն իրեն անհրաժեշտ ապրանքները ձեռք բերելիս պետք է ձգտի, որպեսզի դրանք գնվեն հնարավորինս ցածր գնով՝ այդ կերպ խնայելով թե պետության, թե իր միջոցները:

Բացի այդ ցանկանում ենք հայտնել, որ Ընթացակարգի շրջանակներում կազմակերպված գների նվազեցման շուրջ բանակցությունների ժամանակ, պահպանելով գնման գործընթացի մրցակցային սկզբունքը, բոլոր մասնակիցներին հավասար հնարավորություն է ընձեռնվել վերանայել՝ նվազեցնել Ընթացակարգին մասնակցելու հայտով ներկայացրած իրենց գնային առաջարկները և Ընթացակարգի որևէ մասնակցի նկատմամբ խտրական մոտեցում չի դրսևորվել:

2.3. ՀՀ Սահմանադրության <<Պետական կառավարման համակարգի մարմինները>> վերտառությամբ 159-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <<Պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև (...) նախարարություններին ենթակա այլ մարմիններ, (...) որոնց (...) լիազորությունները սահմանվում են օրենքով:>>:

Պետական կառավարման համակարգի մարմինների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 18-րդ կետի համաձայն <<2. Նախարարությանը ենթակա մարմիններն են՝ 18) գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:>>: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն. <<3. Նախարարությանը ենթակա մարմնի ենթակայությունը համապատասխան նախարարությանը սահմանում է Կառավարությունը:>>:

ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի 743-Լ որոշման 34-րդ կետի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ենթակա մարմիններն են՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:

ՀՀ Կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի 850-Ա որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետի (ա.) պարբերության համաձայն. <<12) Ֆինանսների նախարարությանը ենթակա մարմին է՝ ա. գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:>>:

Վերը նշված նորմերի համաձայն, լինելով ՀՀ ֆինանսների նախարարությանը ենթակա մարմին, գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք հանդիսանում են պետական կառավարման համակարգի մարմին, այդ իսկ պատճառով գնումների հետ

կապված բողոքներ քննող անձանց լիազորությունները սահմանվում են օրենքներով, հետևաբար վերջիններս իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենքներով, մասնավորապես <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով:

3. Այսպիսով, վերոգրյալից հետևում է, որ Պատվիրատուն, ճանաչելով <<ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ-ին և <<Ժասմին հոմ տեքստիլ>> ՍՊԸ-ին համապատասխա-նաբար 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից, գործել է հիմնավոր և օրինական, քանի որ Գնման առարկաների համար <<ԷՍ ԸՆԴ ԷԼ ՏԵՔՍՏԻԼ>> ՍՊԸ-ի և <<Ժասմին հոմ տեքստիլ>> ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկները ամենացածրն էին և վերջիններիս ներկայացրած հայտերը համապատասխանում են Ընթացակարգի պայմաններին:

4. Պահանջը

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Խնդրում ենք՝

Ամբողջությամբ մերժել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/42 ծածկագրով <<Կարեն Սարգսյան>> Ա/Ձ-ի ներկայացրած բողոքը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆամարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 03.03.2020թ.-ին հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտն են ներկայացրել նաև «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն, «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն և «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ն:

«Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկով որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք 1-ին չափաբաժնի համար նշել է 2 002 000 ՀՀ դրամ գումար, 2-րդ չափաբաժնի համար՝ 2 772 000 ՀՀ դրամ, «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի համար նշել է՝ 2 835 000 ՀՀ դրամ գումար, 2-րդ չափաբաժնի համար՝ 3 213 000 ՀՀ դրամ, իսկ «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի համար նշել է՝ 2 885 400 ՀՀ դրամ գումար, 2-րդ չափաբաժնի համար՝ 3 931 200 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.03.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, Հանձնաժողովը որոշել է կասեցնել հայտերի գնահատման նիստը և առաջին ու հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով բոլոր չափաբաժինների մասով մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Հանձնաժողովի 12.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ բանակցությունների մասնակցել են «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն և «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ն, որի արդյունքում 1-ին չափաբաժնի մասով՝ «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն առաջարկել է պայմանագիրն կատարել 2 270 000 ՀՀ դրամով, իսկ «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ն՝ 2 100 000 ՀՀ դրամով: 2-րդ չափաբաժնի մասով «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն առաջարկել է պայմանագիրն կատարել 3 120 000 ՀՀ դրամով:

Նույն արձանագրության համաձայն՝ մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար և գնման ընթացակարգի 1-ին, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ն, 2-րդ չափաբաժնի մասով՝ «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն:

16.03.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ի առաջարկած գինը կազմում է 2 100 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ի առաջարկած գինը կազմում է 3 120 000 ՀՀ դրամ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից 19.03.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե

մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, որոնցով սահմանվել են, որ այն պետք է բաղկացած լինի ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆամարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 03.03.2020թ.-ին հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտն ներկայացրած «Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ն թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկով որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք 1-ին չափաբաժնի համար նշել է 2 002 000 ՀՀ դրամ գումար, 2-րդ չափաբաժնի համար՝ 2 772 000 ՀՀ դրամ, «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի համար նշել է՝ 2 835 000 ՀՀ դրամ գումար, 2-րդ չափաբաժնի համար՝ 3

213 000 ՀՀ դրամ, իսկ «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի համար նշել է՝ 2 885 400 ՀՀ դրամ գումար, 2-րդ չափաբաժնի համար՝ 3 931 200 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 10.03.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, որոշել է կասեցնել հայտերի գնահատման նիստը և առաջին ու հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով բոլոր չափաբաժինների մասով մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Հանձնաժողովի 12.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ բանակցությունների մասնակցել են «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն և «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ն, որի արդյունքում 1-ին չափաբաժնի մասով՝ «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն առաջարկել է պայմանագիրն կատարել 2 270 000 ՀՀ դրամով, իսկ «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ն՝ 2 100 000 ՀՀ դրամով: 2-րդ չափաբաժնի մասով «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն առաջարկել է պայմանագիրն կատարել 3 120 000 ՀՀ դրամով:

Նույն արձանագրության համաձայն՝ մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար և գնման ընթացակարգի 1-ին, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ն, 2-րդ չափաբաժնի մասով՝ «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ն:

16.03.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ի առաջարկած գինը կազմում է 2 100 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ի առաջարկած գինը կազմում է 3 120 000 ՀՀ դրամ:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ 1-ին չափաբաժնի մասով «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է 2 885 400 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի մասով «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է 3 213 000 ՀՀ դրամ: Սակայն տեղի ունեցած բանակցությունների արդյունքում «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ն և «Ժասմին հոմ

տեքստիլ» ՍՊԸ-ն իրենց ներկայացրած գնային առաջարկները նվազեցրել են ոչ միայն նույն գնային առաջարկներով ներկայացրած շահույթից, այլ նաև՝ արդեն հստակ նախատեսված ինքնարժեքից, որի արդյունքում 1-ին չափաբաժնի մասով «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ի առաջարկած գինը կազմել է 2 100 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի մասով «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ի առաջարկած գինը կազմել է 3 120 000 ՀՀ դրամ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ տալով «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ին և «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ին ներկայացնել ինքնարժեքից ցածր գնային առաջարկներ, գործել է ոչ իրավաչափ, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցները «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունեին նվազեցնելու գնային առաջարկներով ներկայացված ինքնարժեքի գումարը, իսկ այդ փաստը Հանձնաժողովը պետք է գնահատեր որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժեր մասնակիցների ներկայացրած հայտերը:

Հակառակ դեպքում խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ տալով Մասնակցներին ներկայացնել ինքնարժեքից ցածր գնային առաջարկ, գործել է ոչ իրավաչափ, խախտելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և Հրավերի 5.1-րդ կետերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Կարեն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից 19.03.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/42 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 12.03.2020թ.-ի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ 1-ին չափաբաժնի մասով «Էս Ընդ Էլ Տեքստիլ» ՍՊԸ-ին և 2-րդ չափաբաժնի մասով «Ժասմին հոմ տեքստիլ» ՍՊԸ-ին հաղթող/ընտրված/ մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**